

Վաղինակ Ծ. Վրդ. Մելոյեան

**ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ
ՄԱՐԻԱՄ ԵՒ ԱՆՈՐ
ՎԵՐԱՓՈԽՄԱՆ
ԽՈՐՀՈՒՐԴԸ**

ԱՆԹԻԼԻԱՍ
2016

Բովանդակություն

Երկու խօսք -----	5
1) Ո՞վ էր Սուրբ Կոյս Մարիամ -----	7
2) Մարիամին դերը մեր փրկագործության մեջ -----	8
3) Սուրբ Կոյս Մարիամ Հին Կտակարանին մեջ -----	13
4) Սուրբ Կոյս Մարիամ Նոր Կտակարանին մեջ -----	19
5) Սուրբ Կոյս Մարիամ Շարակնոցին մեջ -----	25
6) Ի՞նչ է Մարիամին դերը Եկեղեցւոյ կեանքին մեջ -----	27
7) «Աստուածածին» եզրը -----	29

- 8) Աստուածամօր
Վերափոխման դրուագը - - - - - 32
- 9) Աստուածամօր վերափոխումը՝
ապացոյց յաւիտենական
կեանքի գոյութեան - - - - - 38
- 10) Աստուածամօր վերափոխումը
ցոյց կու տայ, որ կեանքը
կը շարունակուի մահէն ետք - - - - 40
- 11) Աստուածամօր վերափոխումը
կը պարզէ, որ երբ ննջենք՝
կ'երթանք Քրիստոսի հետ ապրելու - 42
- 12) Աստուածամօր մարմնաւոր
վերափոխումը՝ նախապատկերացում
մեր մարմիններու յարութեան - - - - 45
- 13) Վերափոխումը կը պարզէ,
որ իսկական մահը՝
առանց Աստուծոյ ապրիլն է - - - - - 48

- 14) Աստուածամօր վերափոխումը կը պարզէ՝ ննջեցեալները վերստին կեանքի կոչելու Քրիստոսի բացարձակ իշխանութիւնը - - - - - 50
- 15) Վերափոխումը պատճառ՝ վստահելու Քրիստոսի խոստումներուն - - - - - 54
- 16) Վերափոխումը հրաւեր՝ երկինքը մեր ուշադրութեան կեդրոնը դարձնելու - - - - - 56
- 17) Ինչո՞ւ համար Սուրբ Կոյս Մարիամին մարմինը չէր կրնար փճանալ - - - - 59
- 18) Բոլոր սերունդներուն կողմէ Երանեալը - - - - - 66
- 19) Խաղողօրհները - - - - - 76

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ճիշդ է որ Սուրբ Գիրքին մեջ չենք կարդար Մարիամ Աստուածածնի վերափոխման մասին, եւ սակայն, վերափոխման խորհուրդը Սուրբ Գրային հիմք ունի, որովհետեւ հոն կը կարդանք Ենովքի ու Եղիայի դէպի երկինք վերափոխումին մասին (Ծն 5.24: Դ.Թգ 2.11):

Միրելիներ, Մարիամ մեզ կը սիրէ այնքան՝ որքան Յիսուս ինք մեզ կը սիրէ. ուստի մենք եւս, պէտք է Մարիամը սիրենք այնքան՝ որքան Յիսուսը կը սիրենք: Թող ոչ ոք խորհի որ կրնայ Տիրոջ սէրը ընդունիլ իր սրտին մեջ, եթէ երբեք չէ ընդունած Տիրոջ Սօր սէրը իր սրտին մեջ: Յիսուս իր սիրտը չի բանար մէկու մը դիմաց՝ որ իր սիրտը փակած է իր Սօրը դիմաց: Պէտք է սիրել Մարիամը, որովհե-

տեւ Յիսուս չի մերժեր մէկը որ կը սիրէ
իբր Մայրը, եւ ո՛չ ալ կ'ընդունի մէկը որ կը
մերժէ կամ չի սիրեր իբր Մայրը: Ուստի,
ամուր բռնեցէք Սուրբ Կոյս Մարիամի
ձեռքէն, եթէ կ'ուզէք որ Յիսուս ամուր
բռնէ ձեր ձեռքէն:

*«Մենք ո՞ր կրնանք գտնել Մարիամի
կարեկցող սրտէն աւելի լաւ ապաւեն...:
Անոր սրտին մէջ է որ թշուառը կը գտնէ
իբր ապաստանարանը, հիւանդը՝ իբր դե-
ղը, տխուրը՝ իբր սփոփանքը, յուսահատը՝
իբր խրատը, լքեալը՝ իբր օգնութիւնը»
(Թովմաս Գեմբացի): «Մարիամը գտնողը՝
ամէն բան կը գտնէ» (Ռէմոն Ժորտանո):*

Ո՞վ էր Սուրբ Կոյս Մարիամ

Մարիամի ծնողներն էին՝ Յովակիմ եւ Աննա, որոնք սկզբնապէս զաւակ չունէին, բայց ուխտեցին որ եթէ երբեք զաւակ ունենային՝ զայն տաճարին պիտի ընծայէին: Երեք տարեկան էր Մարիամ երբ ընծայուեցաւ տաճարին¹, ուր եւ մնաց մինչեւ 14 տարեկան: Անկէ ետք նշանուեցաւ Յովսէփի հետ, եւ բնակեցաւ Գալիլեայի Նազարէթ քաղաքին մէջ: 15 տարեկան էր երբ Գաբրիէլ հրեշտակը երեւցաւ անոր եւ ասետեց, որ Բարձրեային զօրութիւնը՝ Սուրբ Հոգին, իր վրայ պիտի հանգչի եւ անիկա պիտի յղանայ եւ ծնունդ տայ Աստուծոյ Որդիին:

¹ Տաճարին քահանայապետն էր Ջաքարիա, որուն կինն էր Եղիսաբէթ. ասոնք պիտի ըլլային ծնողները Յովհաննէս Մկրտիչին:

Մարիամին Դերը Մեր Փրկագործութեան Մէջ

Աստուած օձին (Սատանային) ըսաւ. *«Քու ու կնոջ (Մարիամի) մէջտեղ, քու սերունդիդ (չար ոգիներուն) ու անոր սերունդին (քրիստոնէաներուն) մէջտեղ թշնամութիւն պիտի դնեմ: Ան (Քրիստոսը) քու գլուխդ պիտի ջախջախէ եւ դուն անոր զարշապարը պիտի խայթես»* (Մն 3.15): Այսպէս եղած է բացատրութիւնը եկեղեցոյ բոլոր հայրերուն:

Յիշեալ հաստուածն ու անոր մեկնութիւնը կը պարզէ, թէ թշնամութիւն եղած է, կայ ու պիտի մնայ, ո՛չ միայն Սատանային ու Քրիստոսի միջեւ, այլեւ՝ Սատանային ու Մարիամի միջեւ: Թշնամութիւն կայ նաեւ Սատանայի հետեւորդներուն (չար ոգիներուն) եւ Քրիստոսի հե-

տելորդներուն (քրիստոնեաներուն, որոնց գլուխը Մարիամն է) միջեւ:

Ճիշդ է որ Յիսուս ինք իր արինով էր որ ճզմեց Սատանային ու անոր արքանեակներուն գլուխը, եւ սակայն, Սատանային գլուխը ճզմելու առաջին քայլը Մարիամ ինք առաւ երբ Գաբրիէլ հրեշտակին ըսաւ. *«Աստուծոյ աղախիմն էմ, թող քու ըսածդ ըլլայ»* (Դկ 1.38): Մարիամ ծնունդ տալով Սատանային գլուխը ճրգմող Փրկչին՝ իր կարգին ճզմած եղաւ անոր գլուխը, եւ անով իսկ իր մասնակցութիւնը բերած եղաւ Աստուծոյ փրկագործական ծրագիրին կատարման մէջ:

Եթէ մեր երկնաւոր Հօրը երկու ձեռքերն են՝ Քրիստոս եւ Սուրբ Հոգին, ապա Քրիստոսի երկու ձեռքերն են՝ Սուրբ Հոգին եւ իր Մայրը: Քրիստոս մարդիկը իրեն կը բերէ Սուրբ Հոգիին ներգործութեամբ, եւ իր Մօրը բարեխօսութեամբ:

Ստորեւ յիշեմ որոշ հեղինակներէ լոկ քանի մը խօսքեր, որոնք կը պարզեն Մարիամի դերը մեր փրկութեան մեջ.-

❖ «Ո՛վ Մարիամ, դուն փրկութիւնն ես անոնց՝ որոնք քեզ կը կանչեն» (Բոնավենդուրա):

❖ «Ամենասուրբ Կոյս, եթէ կ'ուզես որ մենք փրկուինք՝ ա՛ն մեզ քու պաշտպանութեանդ տակ. քանի որ քու միջնորդութենէդ դուրս՝ մենք չունինք ուրիշ յոյս մը՝ հասնելու փրկութեան» (Եփրեմ Խուրի Ասորի):

❖ «Ինչպէս Ադամ եւ Եւա գործակցեցան մեր կործանումին համար, նոյնպէս ալ, երկրորդ Ադամն ու երկրորդ Եւան, այսինքն՝ Յիսուս ու Մարիամ, իրարու հետ կատարեցին մեր փրկագործութիւնը» (Բերնարդոս):

❖ «Փրկութեան ի՞նչ յոյս պիտի ունենայինք, եթէ դուն մեզ լքէիր, ո՛վ Մար-

իսմ, որ քրիստոնեաներուն կեանքն ես» (Գերմանու):

❖ «Թէեւ մենք անձնապէս կը փորձենք փնտռել շնորհքը, բայց կը մոռնանք որ զայն կրնանք գտնել միայն Մարիամի միջնորդութեամբ» (Կայէթանու):

❖ «Անարատ ու մաքրագոյն Թագուհի, փրկէ զիս յաւիտենական դատապարտութենէն» (Յովհաննէս Դամասկացի):

❖ «Առանց Մարիամի խնդրողը, կը նմանի անոր՝ որ կը փորձէ թոշիլ առանց թելի» (Անտոնին):

❖ «Ո՛չ ոք պիտի փրկուի, եթէ ոչ Մարիամի միջոցաւ» (Գերմանու):

❖ Մարիամ զԱստուած ծնաւ, իսկ մենք իր բարեխօսութեամբ Աստուծմէ կը ծնինք (Վարք Սրբոց):

❖ «Ո՛չ մէկ անձ, ո՛վ ամենասուրբ Մարիամ, կրնայ ճանչնալ զԱստուած, եթէ ոչ քու միջոցաւ: Ո՛չ մէկ անձ կրնայ

ազատիլ կամ փրկուիլ եւ շնորհք ստանալ, եթէ ոչ քեզմով, ո՛վ Աստուածածին, Կուսամայր,...» (Գերմանոս):

❖ «Մարիամէն պաշտպանուած հոգիները անշեղօրէն կը հասնին երանութեան» (Անտոնին):

❖ «Անոնք որոնք չեն ծառայեր Մարիամին՝ պիտի չփրկուին, որովհետեւ այս գերազանց Մօր օգնութիւնը մերժելով՝ կը լքուին թէ՛ Աստուծոյ Որդիին օգնութենէն եւ թէ՛ երկնային արքունիքէն» (Յովհաննէս Դամասկացի):

❖ «Մարիամ ամբողջ յոյսն է մեր փրկութեան» (Թովմաս Ագուինացի):

❖ «Ո՛վ Տիրուհի, անկարելի է որ կորսուինք, եթէ դուն կամենաս մեր փրկութիւնը» (Անսելմոս):

Եկէք առատ սէր տածենք Մարիամի հանդէպ, որովհետեւ Յիսուս չի կրնար չփրկել մէկը որ կը սիրէ իր Մայրը:

Սուրբ Կոյս Մարիամ Հին Կտակարանին Մէջ

Հին Կտակարանին մէջ Սուրբ Կոյս Մարիամին համար գործածուած պատկերներն ու նշանները բազմաթիւ ու բազմատեսակ են: Այստեղ բոլորը յիշելը եւ բացատրելը անկարելի է, տեղի սղութեան պատճառով, բայց յիշեմ կարեւորագոյն 12 հատը միայն.-

1) Դրախտին մէջ հաստատուած կենաց Ծառը Մարիամ ինքն է, կ'ըսէ Գրիգոր Տաթեւացին: «Կենաց Ծառ» կը կոչուի որովհետեւ իր վրայ հասունցաւ կենսատու Պտուղը՝ Քրիստոսը (Մն 2.9):

2) Սաբելի ծառը որ «ծնունդ տուաւ» խոյի մը, որ պիտի զոհուէր Իսահակի փոխարէն, կը ներկայացնէ Մարիամը որ ծնունդ տուաւ Աստուծոյ Գառնուկին, որ

պիտի զոհուէր համայն մարդկութեան համար (Մն 22.13):

3) Վառող բայց չկիզուող մորենիի ծառը կը ներկայացնէ Մարիամը (Ել 3.2): Ինչպէս կրակ վառեցաւ մորենիին մէջ, բայց զայն չայրեց ու չփճացուց, նոյնպէս ալ, աստուածային կրակը վառեցաւ Մարիամի արգանդին մէջ, բայց զայն չսպառեց ու չփճացուց:

4) Ահարոնի ծաղկող գաւազանը կը պատկերացնէ Մարիամը (Մն Թւ 17.6-11): Ինչպէս Ահարոնի գաւազանը առանց խոնաւութեան ծաղկեցաւ ու պտուղ բերաւ, այնպէս ալ, Մարիամ առանց սերմի խոնաւութեան յղացաւ եւ պտղաբերեց աշխարհի Կերակրիչը:

5) Դաւիթ մարգարէն Սուրբ Կոյս Մարիամը կը նմանցնէ ծառի մը, *«որ իր ժամանակին իր պտուղը պիտի տայ, եւ անոր տերէնը պիտի չթափի»* (Սղ 1.3):

Արդարեւ, Մարիամ եղաւ այն ծառը, որ իր ժամանակին, այսինքն՝ ճիշդ ատենին ծնաւ Յիսուսը, եւ Յիսուսը ծնելէ ետք *իր տերեւը չթափեցաւ*, այլ խօսքով՝ իր կուսութիւնը չկորսնցուց: Երբ ծառ մը իր պտուղները տայ, անկէ ետք կը թափէ իր տերեւները, որպէսզի պատրաստուի իր ժամանակին վերստին ծաղկելու ու պտուղներ տալու. Մարիամ սակայն Յիսուսը ծնելէ ետք, իր տերեւները չթափեց, այլ խօսքով՝ իր կուսութիւնը չխախտեց, որպէսզի ուրիշ զաւակներու ծնունդ տար, կ'ըսէ Գրիգոր Տաթեւացին:

6) Սողոմոն Մարիամը կը կոչէ *«Փակւած պարտեզ եւ կնքուած աղբիւր»* (Երգ 4.12): Այս վկայութիւնը Մարիամի յաւերժական կուսութիւնը հաստատող ամենէն ուժեղ վկայութիւններէն մին է: Մարիամ եղաւ այն պարտեզը, որմէ դուրս եկաւ Աստուծոյ Որդին, եւ որուն դուրս գալէն

ետք՝ պարտեզը փակուած մնաց, որովհետեւ ուրիշ մը չէր կրնար հոնկէ դուրս գալ: Դարձեալ, Մարիամ եղաւ այն աղբիւրը, որմէ դուրս «հոսեցաւ» Աստուծոյ Որդին, եւ որուն հոսումէն ետք՝ աղբիւրը կնքուած մնաց, որովհետեւ ուրիշ մը չէր կրնար հոնկէ դուրս հոսիլ:

7) Մարիամ անձնաւորումն է նոր ու կատարեալ Միոնին՝ Երուսաղէմին: Ան կոչուած է ճշմարիտ Միոնի դուստրը, որուն մէջ Իսրայէլի Աստուածը կը բնակի. *«Հրճուէ՛, դո՛ւստր Միոնի, բարձրաձայն աղաղակէ՛, Երուսաղէ՛մ, ուրախացի՛ր եւ զուարճացի՛ր ամբողջ սրտովդ, դո՛ւստր Երուսաղէմի, որովհետեւ... Իսրայէլի թագաւորը՝ Տէրը ինք, քու մէջդ է»* (Սով 3.14-15):

8) Սրբարանի դուռը որ միշտ փակ պէտք էր մնար, եւ ուրկէ Իսրայէլի Տէր Աստուածը պիտի մտնէր ու հոնկէ դուրս

գար՝ կը պատկերացնէ Մարիամը (Եզ 44.1-3): Արդարեւ, Մարիամ ինք եղաւ Սրբարանի արեւելեան այն դուռը, ուրկէ մտաւ ու դուրս եկաւ Իսրայէլի Աստուածը՝ Քրիստոս: Այդ դուռը փակ պէտք էր մնար, այսինքն՝ Մարիամ Յիսուսէն զատ ուրիշով մը պիտի չյղանար (Թէոդորոս Քրթենաւոր, եւ Գրիգոր Տաթեւացի):

9) Գզաթը² որ իբրեւ նշան տրուեցաւ Գեղեօնին, կը ներկայացնէ Մարիամը: Գզաթին վրայ ցօղին իջնելը՝ կը պատկերացնէ Սուրբ Հոգիին էջքը Սուրբ Կոյս Մարիամին վրայ եւ անոր յղացուիլը. իսկ երկրորդ անգամ գզաթին չոր մնալը՝ ցոյց կու տայ որ Մարիամ այր մարդու սերմ «չճանչցաւ» (Դտ 6.36-40) (Գրիգոր Տաթեւացի):

² Ոչխարին խուզուած բուրդն է. եկած է Ասորերէն բառէ: Հայերէնով՝ Գեղմ:

10) Ներսէս Շնորհալի Հայրապետը կը հաստատէ, թէ Դանիէլ Սուրբ Կոյս Մարիամը պատկերացուց իբրեւ լեռ մը, որմէ քարի կտոր մը պոկուեցաւ առանց մարդկային ձեռքի միջամտութեան (Դն 2.45): Լեռը Մարիամն է, իսկ լեռնէն պոկուած քարը՝ Քրիստոսը, որ առնուեցաւ լեռնէն (Մարիամէն) առանց մարդկային ձեռքի միջամտութեան, այսինքն՝ առանց մարդկային սերմի:

11) Համաձայն Ներսէս Շնորհալի Հայրապետին, Սողոմոնի «Կնդրուկի Բլուր» բացատրութիւնը կը վերաբերի Սուրբ Կոյս Մարիամին (Երգ 4.6):

12) Աստուած Եսայի մարգարէին միջոցաւ գալիք սերունդներուն նշան մը տուաւ ըսելով. *«Ահա Կոյսը պիտի յղանայ եւ որդի մը պիտի ծնի, եւ անոր անունը պիտի կոչեն Էմմանուէլ»* (7.14): Կոյսի մը յղացուիլը ինքնին տրուած նշանն էր:

Մուրբ Կոյս Մարիամ Նոր Կտակարանին Մէջ

Մուրբ Կոյս Մարիամին կապուած կամ անոր հետ առնչութիւն ունեցող բազմաթիւ ակնարկութիւններ կան Նոր Կտակարանին մէջ: Այսպէս, օրինակ.-

Ընդարձակ երկխօսութիւն մը Գարբիէլ հրեշտակին եւ իր միջեւ, Յիսուսի ծննդեան առնչութեամբ (Ղկ 1.26-38):

Մարիամին այցելութիւնը Եղիսաբէթին Յուդայի երկրին մէջ (Ղկ 1.39-45):

Մարիամի արտասանած օրհներգութիւնը (Ղկ 1.46-56):

Մարիամի միջոցաւ Յիսուսի ծնունդը (Մտ 1.18-25: Ղկ 2.1-20):

Մարիամի ձեռքով Յիսուսի տաճար ընծայումը (Ղկ 2.22-35):

Մարիամին վերադարձը Երուսաղեմ
եւ հոն բնակիլը Յիսուս մանուկին հետ
միասին (Ղկ 2.39-40):

Մարիամի դեպի Եգիպտոս փախուս-
տը եւ անկէ վերադարձը մանուկ Յիսու-
սին հետ միասին (Մտ 2.13-15, 19-23):

Չատիկի տօնին առիթով Յիսուսին
կորսուիլը Երուսաղեմի մէջ եւ Մարիամի
միջոցաւ վերստին գտնուիլը տաճարին
մէջ (Ղկ 2.41-52):

Մարիամի բարեխօսութեամբ, ջուրին
գինիի փոխուիլը Կանայի հարսանիքին
ժամանակ (Յհ 2.1-12):

Մարիամ առիթով մը կը փափաքի
Յիսուսը տեսնել եւ հետը խօսիլ (Մտ
12.46-50: Մր 3.31-35: Ղկ 8.19-21):

Յիսուս իր խաչելութեան պահուն, իր
Մայրը կը յանձնէ իր սիրած աշակեր-
տին՝ Յովհաննէսի հոգատարութեան, եւ
Յովհաննէսը կը յանձնէ իր Մօրը հոգա-

տարութեան (Յհ 19.25-27): Այս մասին քիչ էտք նաեւ պիտի անդրադառնամ:

«Մեծ նշան մը երեւցաւ երկինքի մէջ: Տեսնուեցաւ կին մը, որ արելը հագած էր, լուսինը առած իր ոտքերուն տակ, եւ գլխուն ունէր տասներկու աստղերով պսակ մը» (Յյտ 12.1): Մեկնիչներ կ'ըսեն, որ արելը հագած եւ լուսինը իր ոտքերուն տակ առած այս կինը Մարիամ ինքն է: Յիշեալ պատկերն ու անոր մեկնութիւնը կը պարզեն Մարիամի ունեցած մեծ իշխանութիւնը երկինքի մէջ, ինչպէս նաեւ անոր դիրքը՝ յաղթական եկեղեցոյ կեանքին մէջ:

(Տե՛ս նաեւ՝ Մտ 1.16, 2.10-11: Սր 6.3: Ղկ 2.21, 11.27-28: Գրծ 1.13-14):

Մարիամի կեանքէն ու խօսքերէն շատ են մեր քաղելիք հոգեւոր դասերը: Յիշեմ անոնցմէ լոկ երեքը.-

1) *«Աստուծոյ աղախինն եւ, թող քու ըսածդ ըլլայ»* (Ղկ 1.38): Մենք կրնա՞նք մեր երկնաւոր Սօր նման ըսել. *«Ո՛վ Տէր, ես քու աղախինդ եւ, ես քու ծառայ եմ: Թող որ խօսքդ ու կամքդ կատարուին կեանքիս մէջ»*: Անցեալին ռեւէ անձ որ ինքզինք կամովին իբրեւ ծառայ կամ աղախին նուիրած ըլլար իր տիրոջ կամ տիկնոջ՝ ալ կը դադրէր իր սեփական կամքը ունենալէ, եւ իր տիրոջ կամ տիկնոջ կամքին կատարումը միայն կը հետապնդէր: Մենք եւս, եթէ մեր անձերը կամովին Տիրոջ նուիրած ենք, պէտք է մէկդի թողունք մեր սեփական կամքը, եւ դառնանք կատարիչները Տիրոջ կամքին:

2) *«Ինչ որ ըսէ՛ ձեզի՛ կատարեցէ՛ք»* (Յհ 2.5): Այս բառերով, Մարիամ մեզ կը հրաւիրէ կատարելու Յիսուսի կամքը, խօսքերն ու պատուիրածները: Մարիամի պատուէրն է որ հնազանդինք իր Որդիին:

Կը հնազանդի՞նք իր Որդիին: Կը կատարե՞նք Քրիստոսի կամքը: Քրիստոսի կամքն է որ սուրբ կեանք ապրինք. սուրբ կեանք կ'ապրի՞նք: Քրիստոսի կամքն է որ ներենք մեզ ցուցնողներուն. մենք կը ներե՞նք մեզ ցուցնողներուն: Քրիստոսի կամքն է որ օգնենք աղքատներուն. մենք կ'օգնե՞նք աղքատներուն: Քրիստոսի կամքն է որ զինք սիրենք մեր ամբողջ սրտով. մենք զինք կը սիրե՞նք մեր ամբողջ սրտով: *«Ինչ որ ըսէ ձեզի՝ կատարեցէ՛ք»*: Միրելի ընթերցող, այսօր Մարիամ զիս եւ քեզ կը հրաւիրէ կատարելու ինչ որ Տէրը կը պատուիրէ. եկուր ընդառաջենք Մարիամի հրաւերին:

3) *«Երբ չգտան, կրկին Երուսաղէմ դարձան՝ հոն փնտրելու համար զինք»* (Ղկ 2.45): Մարիամ իր այս վերաբերմունքով մեզի կը սորվեցնէ, որ եթէ չգտնենք Յիսուսը մեր կեանքին մեջ՝ շարունա-

կենք փնտռել զայն: Եթէ մինակ եւ առան-
ձին կը զգանք, ատիկա պէտք է պատճառ
մը ըլլայ ո՛չ թէ յուսահատելու, այլ ընդ-
հակառակը՝ յոյսով Տէրը փնտռելու:
Եսայի կ'ըսէ. *«Տէ՛րը փնտռեցէք, քանի որ
անիկա կը գտնուի: Տէ՛րը կանչեցէք, քա-
նի որ անիկա մօտ է»* (Ես 55.6): Իսկ Դա-
ւիթ կ'ըսէ. *«Եթէ Տէրը փնտռես՝ զայն պի-
տի գտնես»* (Ա.Մն 28.9): Ինչպէս Մարիամ
ու Յովսէփ չղաղրեցան Յիսուս մանուկը
փնտռելէ մինչեւ որ զայն գտան, նոյնպէս
ալ մենք, չղաղրինք Տէրը փնտռելէ մինչեւ
որ զայն գտնենք: Մարիամ Յիսուսը գտաւ
տաճարին մէջ. մենք եւս, եկեղեցոյ ճամ-
բով է որ կրնանք գտնել Յիսուսը:

Սուրբ Կոյս Մարիամ Շարակնոցին Մէջ

Շարականագիր հայրեր իրենց գրութեանց մէջ յատուկ տեղ տուած են Աստուածամօր եւ զայն ներկայացուցած են Ս. Գրային հիմք ունեցող զանազան պատկերներով: Յիշեմ անոնցմէ փունջ մը.-

«Եղեմական դրախտին մէջ տնկուած կեանքի ծառ»: «Հայրածին Ծաղիկը բլղխեցնող»: «Բանաւոր երկիր եւ մեղքի փուշերէն զերծ անդաստան»: «Թեթեւ ամպ»: «Երկրային ցանկութիւններէն մաքուր Կոյս»: «Աստուածային բոցի վառարան»: «Խաղաղութեան առաւօտ եւ զուարթարար Արուսեակ»: «Աստուածային դրախտ եւ իմանալի արեւելք»: «Փրկարար տապանակ»: «Աբրահամեան աստուածընկալ տաղաւար»: «Լիբանանէն եկող զգես-

տաւորուած հարս»: «Ուխտի տապա-
նակ»: «Երկնաւոր Հօր Բանին խորհրդա-
ւոր խորան»: «Մարգարէներու ժողովա-
րան եւ մարդոց կեանքի գրաւական»: «Եօթնարփեան շնորհքներու ընդունա-
րան»: «Յոյսի հաստատուն խարիսխ»: «Մաքրուած տաճար»: «Փակեալ դուռ»: «Կենդանի Ջուրի կնքուած աղբիւր»: «Անապական Կոյս»: «Վեհագոյն երկինք»: «Հողեղէն քերովբէ»: «Հրեղէն սիւն»: «Լոյսի աշտանակ»: «Երկնային Հացի ոսկեայ սափոր»: «Իմանալի գեղմ»: «Լոյսի դուս-
տըր»: «Կեանքի արեւի անվայրափակ Լոյսի խորան»: «Արդարութեան Արեգա-
կին արեւելք»: «Անկիզելի մորենի»: «Անճառելի լոյսին մայրը»: «Անսկզբնա-
կից Որդիին բնակարան»: «Անհասանելի տնօրէնութեան մայրը»: «Աստուծոյ Բա-
նին անձնաւոր տաճար»: «Բոլորին փրկ-
կութեան մայրը»: Եւ այլն:

Ի՞նչ է Մարիամին Դերը Եկեղեցւոյ Կեանքին Մէջ

Գրծ 1.14-ը կը պարզէ, որ Մարիամ ներկայ էր եկեղեցւոյ մէջ, եւ կ'աղօթէր եկեղեցւոյ հետ ու եկեղեցւոյ համար:

Յիսուս եկեղեցին յանձնեց իր Սօրը հոգատարութեան, եւ իր Մայրը յանձնեց եկեղեցւոյ հոգատարութեան. ե՞րբ կատարեց ասիկա. կատարեց երբ խաչին վրայ էր: Յիսուս խաչին վրայ, նախ Յովհաննէս առաքեալը յանձնեց իր Սօրը, եւ ապա՝ իր Մայրը յանձնեց Յովհաննէս առաքեալին (Յհ 19.26-27):

Եկեղեցւոյ մեկնիչ հայրեր կը հաստատեն, թէ Յովհաննէս առաքեալը կը ներկայացնէ եկեղեցին: Այս իմաստով, Յիսուս Յովհաննէս առաքեալը իր Սօրը յանձնելով՝ եկեղեցին է որ իր Սօրը

խնամքին, հոգատարութեան ու պաշտպանութեան յանձնած եղաւ. իսկ իր Մայրը Յովհաննէս առաքեալին յանձնելով՝ Քրիստոս երկու բան կատարած եղաւ.-

ա) Եկեղեցիին, Մարիամը յարգելու, պատուելու եւ մեծարելու պարտականութիւնը տուած եղաւ:

բ) Իր Մայրը՝ Մարիամը, պատասխանատուն ու պաշտպան բարեխօսը նշանակած եղաւ եկեղեցիին:

Արդ, եկեղեցոյ կոչումն է պատուել Մարիամը, յարգել ու մեծարել անոր սուրբ անունը, իսկ Մարիամին կոչումն է տէր ու պաշտպան կանգնիլ իր Որդիին արիւնով գնուած եկեղեցիին, գործել անոր հօրացման համար, բարեխօսել անոր նորոգութեան ու արթնութեան համար, զօրակցիլ անոր՝ իր պայքարին մէջ ընդդէմ Չարին ու անոր բանակներուն, եւ հետապնդել անոր փրկութիւնը:

«Աստուածածին» Եզրը

Աստուածածին բառին Յունարենն է՝ Θεοτοκος-Թեոթոքոս: Այս բառը գործած-
ւեցաւ Ս. Կոյս Մարիամին համար յոյն
հայրերուն կողմէ: Առաջին անգամ զայն
գործածողը եղաւ Որոզինէս (185-254)³:
429 թուին, Կ.Պոլսոյ պատրիարք՝ Նես-
տոր⁴ եւ իր հետետրոդները մերժեցին
Մարիամը կոչել «Աստուածածին», ա-
ռարկելով որ Մարիամ ծնունդ չտուաւ
Աստուծոյ, այլ լոկ Քրիստոսի մարմինին

³ Որոզինէս Աղեքսանդրացին եղած է հիմնադիրը
աստուածաբանական գիտութեան: Եւսեբիոս Կեսա-
րացին զայն կը կոչէ «պողպատէ մարդ», որ «լի էր եւ
կատարեալ ամենայն գիտութեամբ»:

⁴ Կ'ուսուցանէր թէ Քրիստոս ունի երկու բնութիւն եւ
երկու անձ, ի տարբերութիւն ուղղափառ վարդապե-
տութեան, որ Քրիստոսի անձին մէջ կ'ընտրունի մէկ
միաւորեալ բնութիւն եւ մէկ անձ:

էր որ ծնունդ տուաւ: Նեստոր կ'ըսէր թէ Քրիստոս ծնաւ իբրեւ կատարեալ մարդ, եւ իր ծնունդէն ետք էր որ Աստուած եկաւ եւ բնակեցաւ անոր մարմինին մէջ, եւ այդ իսկ պատճառով զայն «Աստուածածին» կոչելու փոխարէն, կը կոչէր՝ Քրիստոսածին կամ մարդածին: Եկեղեցոյ հայրերը ուժեղ կերպով դէմ դրին Նեստորին: Կիրեղ Աղեքսանդրացին ընդարձակ գրութեամբ մը պաշտպանեց Մարիամին համար գործածուած «Աստուածածին» եզրը եւ դատապարտեց Նեստորը: 431 թուին գումարուած Եփեսոսի ժողովի ընթացքին հաստատուեցաւ ու վերջնականապէս որդեգրուեցաւ «Աստուածածին» եզրը:

451 թուի Քաղկեդոնի ժողովը նաեւ հաստատեց «Աստուածածին» բառին գործածութիւնը: *«Եթէ Մարիամէն ծնածը Աստուած է՝ Մարիամն ալ Աստուածածին է»*, կ'ըսէ Կոստանդին Կաթողիկոս:

Յիսուսի ծնունդէն ետք չէր որ աստ-
ւածութիւնը եկաւ ու անոր մէջ բնակեցաւ:
Ան ծնաւ իբրեւ կատարեալ Աստուած ու
կատարեալ մարդ: Կարեւոր է այստեղ
հաստատել, որ թէպէտ Յիսուս իր աստ-
ւածային բնութեամբ ծնաւ Մարիամէն, եւ
սակայն Մարիամ Յիսուսի աստուածա-
յին բնութեան չէր որ ծնունդ տուաւ, այլ՝
անոր աստուածային բնութիւնը ընդգր-
կող մարմինին:

Յիշենք որ որոշ հոսանքներ նոյնիսկ
կը մերժեն Մարիամը կոչել՝ Տիրամայր,
եւ կը մոռնան, որ Մարիամին համար
«Տիրամայր» բառին գործածութիւնը
Սուրբ Գրային հիմք ունի: Եղիսաբէթ
Մարիամը կոչեց՝ «Տիրոջս Մայրը» (Ղկ
1.43), այսինքն՝ Տիրամայր: Տրամաբանու-
թիւնը մեզի կ'ըսէ, որ եթէ Մարիամէն
ծնածը Տէ՛ր է, ուրեմն՝ Մարիամն ալ
Տիրամա՛յր է:

Աստուածամօր Վերափոխման Դրուագը

Աւանդութիւնը մեզի կ'ըսէ, թէ Քրիստոսի համբարձումէն ետք, Աստուածամայրը ապրեցաւ շուրջ 15 տարի Երուսաղէմի մէջ առաքեալներուն ու հաւատացեալներուն հետ, անոնց հետ մասնակցելով աղօթական հաւաքոյթներուն: Երբ 15 տարիները իրենց աւարտին հասան, իր ննջումէն օր մը առաջ, Գաբրիէլ հրեշտակը եկաւ եւ «խոնարհելով երկրպագեց Տիրածին Կոյս Մարիամին» եւ ըսաւ. *«Ուրախացի՛ր, կիներուն մէջ բերկրեալդ, որովհետեւ ահա քեզ կը կանչէ մեր արարիչ Աստուածը եւ քու Որդիդ՝ Յիսուս»:* Ապա Գաբրիէլ հրեշտակը Սուրբ Կոյսին գլուխին վրայ դրաւ ծաղիկներէ կազմուած բրաբիոն պսակ մը: Անանուն հեղի-

նակ մը կը պատմէ թէ ինչպէս երբ Սուրբ Կոյսը առաւ Գաբրիէլին ձեռքէն բրաբիոն պսակը՝ անմիջապէս Ձիթենեաց լեռ գնաց աղօթելու: Եւ հոն, բոլոր ծառերը, բոյսերն ու տունկերը սկսան խոնարհիլ ու երկրպագել իրեն:

Մարիամ ծնրադիր աղօթեց եւ ըսաւ. *«Ո՛վ իմ Տէրս՝ Յիսուս, դուն որ Հօր Աստուծոյ Որդին ես, ինչպէս նաեւ Որդին ես Մայրդ եղող՝ աղախինիդ: Դուն ինքդ խոստացար անձամբ գալ քովս, որպէսզի քեզմով աւանդեմ հոգիս»:* Այս աղօթքէն ետք, Մարիամ ձայն մը լսեց երկինքէն որ կ'ըսէր. *«Չեմ թողուր քեզ Տիրուհի Մայրս, ահա պիտի գամ քովդ, եւ ինձմէ բոլոր խնդրածներդ պիտի կատարուին»:* Տիրոջ այս խօսքէն ետք, Մարիամ ոտքի ելաւ եւ հետը առնելով Յովհաննէսի մայրը՝ Սոդոմէն եւ Նիկողեմոսի դուստրը՝ Մարթան, երեք օրեր շարունակ շրջեցաւ իր

Որդիին բոլոր տնօրինական տեղերը:
Ապա դարձաւ իր տունը եւ քովը կանչել
տուաւ հաւատացեալները եւ անոնց
ըսաւ. *«Ձահեր վառեցէք եւ քովս կեցէք»:*

Առաքեալները որոնք աշխարհի չորս
կողմերը գացեր էին փրկութեան Աւետա-
րանը քարոզելու համար, երբ լսեցին թէ
Սուրբ Կոյսը շուտով կը բաժնուի այս աշ-
խարհէն, Սուրբ Հոգիին առաջնորդու-
թեամբ շուտով Երուսաղէմ հաւաքուե-
ցան: Եկան իրենց հոգեւոր Մօր՝ Մարիա-
մի քով եւ անկէ օրհնութիւն խնդրեցին ու
ատին: Անոնք սկսան օրհնաբանել զԱստ-
ուած եւ գովաբանել Աստուածածինը:

Շարականագիր Հայրապետը կ'ըսէ,
թէ առաքեալները եւ սուրբ կոյսեր ջա-
հազեատներով պայծառացած վառեցին
իրենց լապտերները եւ միաձայն կերպով
սկսան երգել եւ ըսել. *«Օրհնեալ էս, ո՛վ
ամէնօրհնեալդ կիներուն մէջ»:*

Ամբողջ ցերեկն ու գիշերը եւ մինչեւ լուսաբաց աղօթքով անցուցին: Լուսաբացին իրենց աղօթքներուն աւարտին երբ «ամէն» ըսին, Մարիամ իր հոգին աւանդեց: Տունը լեցուեցաւ լոյսով ու անոյշ բոյրով, եւ բոլորը վախցան:

Անոնք մեծ երկիւղածութեամբ, աղօթքներով, սաղմոսներով ու օրհներգութիւններով, ճամբայ ելան Սուրբ Կոյսին մարմինը տանելու եւ զետեղելու Երուսաղէմի մէկ ժայռափոր գերեզմանին մէջ: Տունէն մինչեւ գերեզման տարուած ատեն, անոր մարմինէն լոյսեր կը ճառագայթէին: Իսկ գերեզման դրուելուն պէս՝ լոյսերը աւելի՛ զօրացան ու դարձան արեւի լոյսին նման: Աւանդութիւնը կը պատմէ թէ երեք օրեր անդադար գերեզմանէն երկնային լոյսեր կը ճառագայթէին եւ հրեշտակային փառաբանութիւններ կը լսուէին:

Իր թաղման չորրորդ օրը, Տէրը ամպով եւ իր հրեշտակներուն հետ միասին իջաւ Սուրբ Կոյսին գերեզմանը: Տիրոջ հրամանով, սուրբ հրեշտակները առին Սուրբ Կոյսին մարմինը եւ զայն դրին ամպեղէն կառքի մէջ եւ բոլորը սկսան քաղցրաձայն օրհներգութիւններ երգել:

Նիկողեմնոս կը վկայէ թէ ամենասուրբ Կոյսին մարմինը իր Որդիին առաջնորդութեամբ եւ անոր սուրբ հրեշտակներուն հետ միասին ամպերով երկինք յափըշտակուեցաւ. ան կ'ըսէ նաեւ, թէ մարմինին փոխադրուած ժամանակ, յստակ չէր որ հոգին միացա՞ծ էր անոր, թէ՛ երկինք հասնելէ ետք միացաւ:

Մարիամ Աստուածածին իր Որդիին հետ միասին, երկինք մտաւ փառաւոր ու փառաւորուած վիճակով: Երկինքի մէջ անպատմելի փառքերու արժանացաւ: Շարականագիր Հայրապետը կը վկայէ,

թէ ինչպէս Մարիամ Աստուածածինը բազմաչեայ քերովբէներուն եւ վեցթեւեան սերովբէներուն հետ միասին, մտաւ եօթնաստեղեան խորանները եւ տեսաւ բազմազան փառքի այն աթոռները որոնք պատրաստուած էին իրեն համար:

Թաղման արարողութեան բացակայ էր Բարթողոմէոս առաքեալ: Երբ լսեց Սուրբ Կոյսին ննջումին մասին, վերադարձաւ Երուսաղէմ եւ շատ փափաքեցաւ տեսնել Սուրբ Կոյսին մարմինը: Երբ բոլոր աշակերտները միասին գացին գերեզման եւ գլորեցին գերեզմանին քարը, տեսան որ Սուրբ Կոյսին մարմինը հոն չէր եւ յիշեցին Քրիստոսի խոստումը, թէ՛ իր Մօրը ննջումէն երեք օրեր ետք, չորրորդ օրը, պիտի գար իր Մայրը իր մօտ առնելու: Անպատմելի ուրախութեամբ լեցուն սիրտերով, առաքեալները վերադարձան իրենց առաքելութեան:

Աստուածամօր Վերափոխումը՝ Ապացոյց Յաւիտենական Կեանքի Գոյութեան

Նախքան Քրիստոսի յարութիւնը եւ Աստուածամօր վերափոխումը, մարդկութիւնը վստահ չէր որ մահէն ետք կեանք կար թէ ոչ: Քրիստոսի երկինք համբարձումը եւ Աստուածամօր վերափոխուիլը երկինք, ապացոյց ու վկայութիւն դարձան յաւիտենական կեանքի գոյութեան:

Նախապէս, մահը մարդ արարածին համար «ամէն բանի աւարտը» կը նշանակէր, բայց Քրիստոսի մահուամբ ու յարութեամբ եւ Աստուածամօր վերափոխումով, մահը դադրեցաւ աւարտ մը ըլլալէ ու դարձաւ նո՛ր կեանքի մը՝ նո՛ր

սկիզբը: Նախապէս, մարդուն համար մահը «ամէն բանի կորուստը» կը նշանակէր, բայց Տիրոջ յարութեամբ ու Տիրամօր վերափոխումով, մահը դադրեցաւ կորուստ ըլլալէ ու դարձաւ գտնուիլ մը: Աստուծոյ կողմէ ու զԱստուած գտնել մը: Նախապէս մահը «հող էիր ու հողին դառնաս» իմաստը ունէր, բայց Աստուծոյ ու Աստուածածնի վերափոխումով, մահը փոխուեցաւ «Աստուծմէ էիր ու Աստուծոյ դառնաս» իրականութեան:

Քրիստոսի յարութիւնն ու Աստուածամօր վերափոխումը ցոյց կու տան, թէ մահէն անդին կեա՛նք կայ ու կեանքը կը շարունակուի: Վերափոխումը, հետեւաբար, մեզ կը հրաւիրէ մեր ուշադրութիւնը կեդրոնացնելու մահէն անդին գտնուող անմահ կեանքին վրայ, մեղսալից այս կեանքէն անդին գտնուող մեղսազե՛րծ կեանքին վրայ:

Աստուածամօր Վերափոխու- մը Յոյց Կու տայ, Որ Կեանքը Կը Շարունակուի Մահէն Ետք

Աստուածամօր երկրէն երկինք փոխադրուիլը, կը բացայայտէ թէ երբ հաւատացեալը բաժնուի երկրաւոր այս կեանքէն, կը շարունակէ ապրիլ երկինքի մէջ: Այս ճշմարտութիւնն է որ Յիսուս հրապարակեց երբ ըսաւ. «*Ան որ ինձի կը հաւատայ, թէպէտեւ մեռնի՝ պիտի ապրի*» (Յի 11.25): Այս բառերով, Յիսուս ուզեց ցոյց տալ մեզի, թէ ով որ մարմնապէս կը մեռնի՝ կը շարունակէ ապրիլ. ուրեմն, մահը մարդուն կեանքին աւարտը կամ վերջակէտը չէ, այլ պարզապէս մարդը երկրաւոր այս կեանքէն՝ դէպի երկնային կեանքը փոխադրող միջոց մը: Տէրը խօս-

քը շարունակելով կ'ըսէ. «Իսկ ան որ ողջ է եւ ինծի կը հաւատայ՝ երբեք պիտի չմեռնի» (Յհ 11.26): Երկրորդ այս համարին մէջ մահուան ակնարկութիւն չկայ: Երբ Տէրը կը հաստատէ թէ իրեն հաւատացողը՝ «երբեք պիտի չմեռնի», սա կը նշանակէ թէ ան մարմնաւոր մահը՝ մահ չի նկատեր: Այս իմաստով, Աստուածամօր վերափոխումը կը պարզէ, որ քրիստոնէական հասկացողութեամբ, մահը՝ կեանքէ կեանք երթալու ընթացք մըն է: Արդարեւ, մահը՝ ժամանակաւոր այս կեանքէն՝ անժամանակ կեանքին բացւելու ժամն է. արարածներուն քովէն՝ Արարիչին քով երթալ մըն է. ապականած այս աշխարհէն՝ սրբութեան ու սուրբերուն աշխարհը տարուիլ մըն է. մեղսալից այս աշխարհէն՝ անմեղներու աշխարհը փոխադրուելու հանգրուանն է:

Աստուածամօր
Վերափոխումը Կը Պարզէ,
Որ Երբ Ննջենք՝ Կ'երթանք
Քրիստոսի Հետ Ապրելու

Աստուածամօր մարմինին երկինք փոխադրուիլը նոյնինքն Յիսուսի ձեռքով եւ Յիսուսի քով, կը պարզէ թէ հաւատացեալ մարդը այս կեանքէն բաժնուելէ ետք՝ կ'երթայ Յիսուսի հետ ըլլալու: Երկրի վրայ Յիսուսը իր սրտին մէջ ընդունող մարդը՝ մահէն ետք Յիսուսի իսկ ձեռքով կ'ընդունուի երկինք: Յիսուս իր աջակողմը խաչուող աւագակին ըսաւ. *«Վստահ եղիր, այսօր ինձի հետ պիտի ըլլաս դրախտին մէջ»* (Ղկ 23.43): Հաւատացեալ մարդը մեռնելուն պէս՝ կ'երթայ Յիսուսի հետ ըլլալու դրախտին մէջ, իսկ դրախտը

ուրիշ քան չէ եթէ ոչ նոյնինքն Յիսուսը: Դրախտին մէջ ըլլալը՝ Յիսուսի հետ ըլլալ կը նշանակէ, եւ Յիսուսի հետ ըլլալը՝ դրախտին մէջ ըլլալ կը նշանակէ:

Պօղոս առաքեալ կը վկայէ, թէ մարմինէն դուրս գալը՝ *«Տիրոջ քով ըլլալ»* կը նշանակէ (Բ.Կր 5.8): Առաքեալին համար, մահը ուրիշ քան չէր եթէ ոչ *«այս կեանքէն ելլել եւ Քրիստոսի հետ ըլլալ»*ու պահ մը (Փլպ 1.23): Իր երկրաւոր կեանքի ընթացքին Քրիստոսի հետ ապրողը՝ իր մահէն ետք կ'երթայ դարձեալ Քրիստոսի հետ ապրելու: Քիչ մը վերեւ, առաքեալը կ'ըսէ. *«Ինձի համար կեանքը Քրիստոս է, եւ ուստի մեռնիլ՝ այդ կեանքը շահիլ կը նշանակէ»* (Փլպ 1.21): Ուշադրութիւն դարձուցէք, որ առաքեալը այստեղ «կեանք» ըսելով Քրիստոսի անձն է որ կը հասկնայ: Ուրեմն, ան մահէն ետք Քրիստոսը շահելու եւ Քրիստոսի հետ ըլլալու մասին է որ

կը խօսի այստեղ, եւ ո՛չ թէ լոկ յաւիտենական կեանքը ձեռք ձգելու մասին: Ան հաստատելէ ետք թէ իրեն *«համար կեանքը Քրիստոս է»*, կ'ըսէ. *«Ուստի մեռնիլ՝ այդ կեանքը (այսինքն՝ Քրիստոսը) շահիլ կը նշանակէ»*: Մենք սովորաբար երբ «յաւիտենական կեանք» կ'ըսենք, կը հասկընանք արքայութեան անվախճան կեանքը, եւ քիչ կը պատահի որ հասկնանք ուղղակիօրէն Քրիստոսի անձը, մինչդեռ առաքեալը «կեանք» ըսելով, Քրիստոսը կը հասկնայ: Յովհաննէս առաքեալ ինք եւս «յաւիտենական կեանք» ըսելով, կը հասկնայ՝ Քրիստոսի անձը (Ա.Յհ 1.2, 5.11): Այս իմաստով, յաւիտենական կեանք խոստացողը եւ խոստացուած յաւիտենական կեանքը՝ Քրիստոս ինքն է: Դրախտը պարգեւողը եւ պարգեւուած դրախտը՝ Քրիստոս ինքն է: Շնորհուելիք արքայութիւնը՝ Արքան ինքն է:

Աստուածամօր Մարմնաւոր Վերափոխումը՝ Նախապատ- կերացում Մեր Մարմիններու Յարութեան

Աստուածամօր մարմնաւոր վերափոխումը, նախապատկերացումն է, եւ միաժամանակ՝ գրաւականը մեր մարմիններու յարութեան ու փրկութեան, որ տեղի պիտի ունենայ Քրիստոսի երկրորդ գալստեան ժամանակ:

Սուրբ Կոյսին մարմինին փոխադրւիլը երկինք, յստակօրէն ցոյց կու տայ, թէ Աստուծոյ ծրագիրին մաս կը կազմէ ո՛չ միայն մեր հոգիներուն փրկութիւնը, այլ նաեւ՝ մեր մարմիններուն փրկութիւնը (Հո 8.23): Յիսուս չիաչուեցաւ լոկ մեր հոգիներու փրկութեան համար, այլեւ՝ մեր

մարմիններու փրկութեան համար: Մեր մարմիններու յարութեան ու փրկութեան կապուած համարները շատ են: Յիշեմ լոկ մի քանին.-

Պօղոս առաքեալ կը հաստատէ, թէ Քրիստոս *«մեր մահկանացու մարմինները պիտի կերպարանափոխէ եւ իր մարմինին պէս փառաւոր դարձնէ իր զօրութեամբը»* (Փլպ 3.21):

Եսայի մարգարէն կ'ըսէ. *«Քու մեռելներդ պիտի ողջնան: Մեռելներուդ մարմինները յարութիւն պիտի առնեն: Արթընցէ՛ք ու ցնծութեամբ երգեցէ՛ք, ո՛վ հողի մէջ բնակողներ. ...: Երկիրը իր մեռելները դուրս պիտի նետէ»* (Ես 26.19):

Դանիէլ մարգարէն կ'ըսէ. *«Երկրի հողին մէջ քնացողները պիտի արթնան, ոմանք յաւիտենական կեանքի համար, ոմանք ալ նախատինքի ու յաւիտենական անարգանքի համար»* (Դն 12.2):

Պողոս կ'ըսէ. «Եթէ Աստուծոյ Հոգին ձեր մէջ կը բնակի, Աստուած, որ Յիսուս Քրիստոսը մեռելներէն յարուցանեց, իր Հոգիին միջոցաւ որ ձեր մէջ կը բնակի՝ պիտի կենդանացնէ նաեւ ձեր մահկանացու մարմինները» (Հո 8.11):

Յոբ կ'ըսէ. «Գիտեմ թէ իմ Փրկիչս ողջ է, եւ ի վերջոյ պիտի յայտնուի երկրի վրայ. եւ թէպէտ ասկէ ետք մորթու ալ փրտի, բայց դարձեալ այս ՄԱՐՄԻՆՈՎՍ զԱստուած պիտի տեսնեմ: Ես ինքս պիտի տեսնեմ զայն, իմ սեփական ասքերովըս եւ ոչ թէ ուրիշին ասքերով» (Յոբ 19.25-27):

Առաքեալը կը հաստատէ, թէ իւրաքանչիւր մարդ իր մարմինով հատուցում պիտի ստանայ (Բ.Կր 5.10: Տե՛ս նաեւ՝ Ա.Կր 6.14: Եզ 37.5-6: Յհ 5.28-29, 11.24: Բ.Կր 5.1-4: Ա.Կր 15.12-22: Ղկ 24.39: Գրծ 24.15: Ա.Թս 4.14-16: Յյտ 20.12-13: Եւայլն):

Վերափոխումը Կը Պարզէ, Որ Իսկական Մահը՝ Առանց Աստուծոյ Ապրիլն Է

Աստուածամօր մարմնաւոր վերափոխումը կը պարզէ, թէ իսկական մահը՝ մարմնաւոր մահը չէ, այլ՝ հոգեւոր մահը: Յաճախ քարոզիչներ լսած ենք որոնք կ'ըսեն՝ *«մահը ուրիշ բան չէ եթէ ոչ հոգիին բաժնուիլը մարմինէն»*: Եւ սակայն, մահը հոգիին մարմինէն բաժնուիլը չէ, այլ՝ Աստուծմէ բաժնուիլը: Արդարեւ, մահը՝ առանց Աստուծոյ ապրիլն է, առանց աղօթքի ապրիլն է, առանց հաւատքի ապրիլն է: Եթէ երբեք հոգեւոր մահը՝ առանց Աստուծոյ ապրիլն է, ապա ուրեմըն յաւիտենական մահը՝ դատաստանի

օրը «Տիրոջ ներկայութենէն եւ անոր փա-
ռաւոր գորութենէն» զրկուիլն է (Բ.Թս 1.9):

Աստուածամօր մարմնաւոր վերափո-
խումը մեզ կը հրաւիրէ ապրելու Աստու-
ծոյ համար, Աստուծոյ հետ, Աստուծով
ու Աստուծոյ ներկայութեան մէջ: Եթէ
կ'ապրինք կենդանարար Աստուծոյ ներ-
կայութեան մէջ, կը նշանակէ թէ կենդանի
է մեր հոգին, իսկ եթէ կ'ապրինք առանց
Աստուծոյ կենդանարար ներկայութեան,
կը նշանակէ թէ մեռա՛ծ է մեր հոգին: Ինչ-
պէս մարմինը կը մեռնի առանց հոգիին,
նոյնպէս ալ հոգին կը մեռնի առանց Աս-
տուծոյ: Մարդուս հոգին չի կրնար ապրիլ
առանց իր Տիրոջ ու Ստեղծիչին: Ինչպէս
նիւթական մարմինը կարիքը ունի նիւ-
թական հացի որպէսզի ապրի, նոյնպէս
ալ մեր աննիւթական հոգին կարիքը ունի
աննիւթական Աստուծոյ ներկայութեան
որպէսզի ապրի:

Աստուածամօր
Վերափոխումը Կը Պարզէ՝
Ննջեցեալները Վերստին
Կեանքի Կոչելու Քրիստոսի
Բացարձակ Իշխանութիւնը

Քրիստոսի անձամբ աշխարհ գալը եւ իր Մօրը մարմինը երկինք փոխադրելը կը բացայայտէ՝ ննջեցեալները վերստին կեանքի կոչելու անոր բացարձակ իշխանութիւնը: Արդ, ինչպէս Քրիստոս անձամբ աշխարհ եկաւ եւ իր Մօրը մարմինը երկինք տարաւ, նոյնպէս ալ ինք անձամբ *«երկինքէն պիտի իջնէ, եւ նախ յարութիւն պիտի առնեն անոնք՝ որ Քրիստոսի հաւատացին եւ մեռան: Եւ ապա, մեզմէ անոնք որ այն ատեն դեռ ողջ պի-*

տի ըլլան՝ անոնց հետ միասին ամպերու վրայ երկինք պիտի յափշտակուին Տէրը դիմաւորելու համար. եւ այնուհետեւ Տիրոջ հետ միասին պիտի ըլլանք յաւիտեան» (Ա.Թս 4.16-17):

Պօղոս առաքեալ կը հաստատէ, թէ *«Քրիստոս մեռաւ եւ վերակենդանացաւ, որպէսզի Տէրը ըլլայ բոլորին, թէ՛ ապրողներուն եւ թէ՛ մեռածներուն հաւասարապէս»* (Հռ 14.9): Քրիստոս Տէ՛րն է թէ՛ ապրողներուն եւ թէ՛ մեռածներուն, որովհետեւ ան իր արինը թափեց թէ՛ ապրողներուն եւ թէ՛ մեռածներուն համար: Քրիստոս Տէ՛րն է թէ՛ ապրողներուն եւ թէ՛ մեռածներուն, որովհետեւ մարմինով մեռնելէ ետք՝ *«կենդանի մնաց հոգիով: Եւ հոգիով ալ՝ զնաց քարոզեց քանտարկուած հոգիներուն»* (Ա.Պտ 3.18-19, 4.6): Եւ իբր Տէրը թէ՛ ապրողներուն եւ թէ՛ մեռածներուն, ի՛նքն է որ *«պիտի դա-*

տէ ողջերն ու մեռելները» (Գրծ 10.42: Բ.Տմ 4.1: Ա.Պտ 4.5):

Ինչպէս Քրիստոս իր սուրբ Մօրը խոստացաւ, թէ ինք անձամբ աշխարհ պիտի գար եւ զինք քովը փոխադրէր, մեզի՛ նաեւ խոստացաւ, թէ ինք անձամբ աշխարհ պիտի գայ եւ մեզ մեր գերեզմաններէն դուրս պիտի բերէ ու յաիտենական կեանք պիտի պարգեւէ մեզի: Յովհաննէսի Աւետարանին մէջ կը կարդանք, թէ ժամանակներու աւարտին, *«բռնոր անոնք որոնք գերեզմաններու մէջ են՝ պիտի լսեն Յիսուսի ձայնը եւ դուրս գան. անոնք որ բարիք գործած են՝ յարութիւն պիտի առնեն եւ ապրին, իսկ անոնք որ չարիք գործած են՝ յարութիւն պիտի առնեն եւ դատապարտուին»* (Յհ 5.28-29: Տե՛ս նաեւ՝ Կղ 3.4: Ա.Թս 1.10: Փլպ 3.20-21: Բ.Թս 2.1: Եւայլն): Եկէք վստահինք Քրիստոսի, որ իր տէրունական խօսքի

գորութեամբ կեանքի պիտի կոչէ մեր
մարմինները՝ իր գալստեան օրը:

Վերափոխումը Պատճառ՝ Վստահելու Քրիստոսի Խոստումներուն

Քրիստոս նախքան իր համբարձումը, իր վերջին պատուերները տալէ ետք իր աշակերտներուն, անոնց ներկայութեան խոստացաւ իր Սօրը որ երբ ննջէ՝ պիտի գայ եւ զինք երկինք փոխադրէ: Ան իր խոստումին տէ՛րը եղաւ: Երբ ննջեց իր Մայրը՝ եկաւ եւ անոր մարմինը երկինք փոխադրեց: Այս իրողութիւնը պատճառ պէտք է դառնայ, որ հաւատքով կառչինք Տիրոջ բոլոր խօսքերուն ու խոստումներուն: Տէրը ի՛նքն էր որ Հին Կտակարանի մէջ ըսաւ. *«Ե՛ւ խօսեցայ ու ե՛ւ պիտի կատարեմ: Ե՛ւ խորհեցայ ու ե՛ւ պիտի գործադրեմ»* (Ես 46.11): Մար-

դիկ կրնան խօսիլ ու իրենց խօսածը չգործադրել, կամ իրենց խօսածը մոռնալ, ուրանալ, փոխել կամ այլափոխել: Կրնան խոստումներ տալ ու իրենց խոստումները չկատարել, կամ չկարենան կատարել: Քրիստոս սակայն իր բերնով խօսածը՝ իր ձեռքով կատարելու զօրութիւնը ունի, ինչպէս Դաւիթ կ'ըսէ. «*Բերնովդ ըսածդ՝ ձեռքովդ կատարեցիր*» (Գ.Թգ 8.24): Միայն Քրիստոս կրնայ ըսել. «*Ես՝ Տէրս՝ խօսեցայ ու պիտի կատարեմ*» (Եզ 36.36): Քրիստոս իր խորհածը եւ առած որոշումը իրականացնելու կարողութիւնը ունեցող Աստուած է: Ան խոստացաւ գալու եւ Մայրը քովը տանելու եւ եկաւ ու տարաւ: Ան նաեւ խոստացաւ դառնալ մեր մօտ (Յհ 14.18), եւ մեզ իր քով հաւաքել (Բ.Թս 2.1): Հաւատա՛նք ու կառչի՛նք իր այս խոստումին: Հաւատանք որ ան երկինքէն պիտի գայ ու մեզ երկինք պիտի տանի:

Վերափոխումը Հրաւեր՝ Երկինքը Մեր Ուշադրութեան Կեդրոնը Դարձնելու

Մարիամ երկրաւոր արարած մըն էր, բայց երկնայնացաւ, այլ խօսքով՝ երկինք փոխադրուեցաւ: Աստուածամօր վերափոխումը երկրէն երկինք՝ հրաւեր մըն է Քրիստոսի հետեւորդներուն, իրենց ուշադրութիւնը կեդրոնացնելու երկինքի վրայ, եւ հոն իրենց համար պահուած կեանքին վրայ: Պօղոս առաքեալ Քրիստոսով մեղքի աշխարհէն յարութիւն առնողներուն կը պատուիրէ իրենց ուշադրութիւնը երկինքի վրայ կեդրոնացնելու եւ երկնաւոր բաներու մասին մտածելու (Կղ 3.1-2): Աստուածամօր վերափոխումը երկրէն երկինք ցոյց կու տայ, թէ մարդ

արարածը չէ ստեղծուած այս նիւթական աշխարհին համար, այլ՝ երկինքի համար: Մարդը թէպէտ երկրի վրայ կ'ապրի, բայց երկինքի համար պէտք է ապրի, որովհետեւ երկինքի համար ստեղծուած է: Թէպէտ երկրի վրայ կը գործէ, բայց երկինքի համար պէտք է գործէ: Թէպէտ երկրի վրայ կ'աշխատի, բայց երկրի Ստեղծիչին փառքին համար պէտք է աշխատի:

Երկրէն երկինք Աստուածամօր վերափոխումը, հրաւեր մըն է իւրաքանչիւրիս, մեր հետաքրքրութեան, մտածութեան, ուշադրութեան, խորհրդածութեան ու սիրոյն առարկան դարձնելու երկինքն ու հոն գտնուող յաւիտենական կեանքը՝ Քրիստոսը: Պօղոս հաւատացեալներուն՝ կ'ըսէ. *«Այդ հաւատքն ու սէրը կը ցուցաբերէք՝ յաւիտենական կեանքին յոյսով, որ ձեզի վերապահուած է երկինքի մէջ»*

(Կղ 1.5): Մենք ի՞նչ պիտի ընեինք եթե գիտնայինք որ մեծ գանձ մը վերապահուած է մեզի՝ մեր ապրած երկրէն տարբեր երկրի մը մէջ: Պիտի չուզէինք վայրկեան առաջ հոն երթալ: Այդ երկիրն ու հոն գտնուող գանձը մեր ուշադրութեան ու մտածութեան առարկան պիտի չըլլային: Ահա առաքեալը կը խօսի մեզի ճշմարիտ ու յաւիտենական Գանձի մը մասին (Եփ 3.8), որ վերապահուած է մեզի երկինքի մէջ: Ի՞նչ կ'ընենք: Կը մտածենք անոր մասին: Կ'ուզենք շուտով անոր տիրանալ: *«Մենք երկինքի քաղաքացիներ ենք»* (Փլպ 3.20), ուստի պէտք է երկինքի մասին մտածենք ու երկինքի համար ապրինք: Պէտք է մեր կեանքին նպատակը դարձնենք երկի՛նքը՝ որուն համար ստեղծուած ենք. պէտք է մեր սիրոյն առարկան դարձնենք Յիսուս՝ որով եւ որուն համար կանք:

Ինչո՞ւ Համար Սուրբ Կոյս Մարիամին Մարմինը Չէր Կրնար Փճանալ

Անուղղափառ հոսանքներու հետե-
ւորդներն են որ այս հարցումը կը հար-
ցրնեն: Եւ սակայն,

Ի՞նչպէս կրնար կորսուիլ մարմինը
Մարիամին, որ ընտրուած էր ըլլալու
դո՛ւստրը երկնաւոր Հօր, հա՛րսը Սուրբ
Հոգիին, եւ Մա՛յրը Աստուծոյ Որդիին:

Արդարեւ,

Մարիամ դո՛ւստրն էր երկնաւոր Հօր:
Ի՞նչպէս կրնար Հայրն Աստուած թոյլ
տալ որ իր դուստրին մարմինը հողին
յանձնուէր ու հողին բաժինը դառնար,
ինք որ ընտրուած էր իր բաժինը բերելու
մարդկութեան փրկագործութեան մէջ:

Մարիամ Մա՛յրն էր Աստուծոյ Որդի-
ին: Ի՞նչպէս կրնար Աստուծոյ Որդին թոյլ
տալ որ իր Մօրը սուրբ մարմինը որուն
մէջ սնած էր ինը ամիսներ, նեխէր ու
որդնալից դառնար: Եթէ երբեք Յիսուս
մարմինով երկինք մեկնեցաւ, ի՞նչն էր
պատճառը որ ան իր Մօրը մարմինն ալ
երկինք չփոխադրէր: Եթէ երբեք Ենովքի
մարմինը երկինք փոխադրուեցաւ, որով-
հետեւ իր ամբողջ կեանքի ընթացքին
Աստուծոյ հետ քալեց, միթէ՞ Մարիամին
մարմինը երկինք պէտք չէր փոխադրը-
ւեր, ինք որ իր ամբողջ կեանքի ընթացքին
Աստուծոյ հետ քալեց, այսինքն՝ Աստու-
ծոյ կամքին համաձայն ապրեցաւ:

Մարիամ հարսն էր Սուրբ Հոգիին:
Ի՞նչպէս կրնար Սուրբ Հոգին թոյլ տալ որ
իբր հարսը հող ու մոխիր դառնար:

Ի՞նչպէս կրնար զԱստուած ծնող
Մարիամին մարմինը գարշութիւն ծնիլ:

Ի՞նչպէս կրնար որդերու կողմէ ուս-
ւիլ Մարիամին մարմինը, որ ծնունդ տը-
ւաւ Որթատունկին (Յհ 15.1):

Ի՞նչպէս կրնար Սուրբ Հոգիով յղա-
ցած Մարիամին մարմինը զգուելի մի-
ջատներու պղծութեամբ յղանալ:

Ի՞նչպէս կրնար Բարձրեալ Աստուծոյ
Որդիով բնակուած Մարիամին մարմինը
նեխածութեամբ բնակուիլ:

Ի՞նչպէս կրնար փճանալ Մարիամին
մարմինը, որ ծնունդ տուաւ անմարմին
Աստուծոյ:

Ի՞նչպէս կրնար փճանալ Մարիամին
մարմինը, որ ծնունդ տուաւ մեզ մեր մար-
մինի գերութենէն ազատագրող Էմմանու-
էլին:

Ի՞նչպէս կրնար փճանալ Մարիամին
մարմինը, որուն մարմինը պէտք էր դառ-
նար նախապատկերացումը մեր մար-
միններու փրկութեան:

Ի՞նչպէս կրնար փճանալ Մարիամին մարմինը, որ ծնունդ տուաւ մարդկութիւնն ու աշխարհը փճացումի դատապարտութենէն ազատող Աստուծոյ Ռդիին:

Ի՞նչպէս կրնար հողի վերածուիլ Մարիամին մարմինը, որ ծնունդ տուաւ հրեղէն Աստուծոյ:

Ի՞նչպէս կրնար հողի վերածուիլ Մարիամին մարմինը, որ ծնաւ Փրկիչը՝ որ նորոգիչը պիտի ըլլար մեր հողեղէն բնութեան:

Ի՞նչպէս կրնար ժամանակը իր փոշիին մէջ ծածկել Մարիամին մարմինը, որ իր որովայնին մէջ առաւ ժամանակի ստեղծիչ՝ յաւիտենական Աստուածը:

Ի՞նչպէս կրնար Սուրբ Կոյսին մարմինը հաց դառնալ ուտիճներու, ինք որ ծնունդ տուաւ կեանքի Հացին:

Ի՞նչպէս կրնար երկրին ընդերքը մնալ Մարիամ, ինք որ կեանք տուած էր երկնաւոր Փրկչին, որ պիտի ըլլար Փրկիչը երկրին ու անոր ընդերքին:

Ի՞նչպէս կրնար եղծանիլ Մարիամին մարմինը, ինք որ կեանք տուաւ էր անեղծ Աստուծոյ:

Ի՞նչպէս կրնար Մարիամ ամփոփուիլ գերեզմանի մէջ ու հոն մնալ, ինք որ իր արգանդին մէջ ամփոփեց անամփոփելի Ստեղծիչը:

Ի՞նչպէս կրնար գարշահոտիլ յաւիտենական կեանքի անուշահոտութիւնը հանդիսացող Քրիստոսը իր մէջ առնող Մարիամին մարմինը:

Ի՞նչպէս կրնար կորսուիլ Մարիամին մարմինը, որմէ ծնած էր անմարմին Աստուածը՝ մեր հոգիներու ու մարմիններու փրկութեան ի խնդիր:

Ի՞նչպէս կրնար «Ժանգոտիլ» Մարիամին մարմինը, որ դարձած էր գանձատունը անապական գանձին՝ Քրիստոսի:

Ի՞նչպէս կրնար փճանալ Մարիամին մարմինը, որ սրբուած էր Սուրբ Հոգիով ու բնակեցուած Աստուծոյ Որդիով:

Ի՞նչպէս կրնար խաւարին բաժինը դառնալ Մարիամին մարմինը, որ աշխարհ բերած էր Լո՛յսը աշխարհին:

Ի՞նչպէս կրնար զեռուններու կողմէ գրկուիլ Մարիամին մարմինը, որ բազմիցս գրկած ու գգուած էր Յիսուս մանուկը:

Ի՞նչպէս կրնար կորսուիլ Մարիամին մարմինը, որ ծնունդ տուած էր մեզ յաւիտենական կորուստէն Ազատողին:

Ի՞նչպէս կրնար ապականիլ Մարիամին մարմինը, որ ծնաւ մեզ մեղքի ապականութենէն ազատող Անապականը:

Ի՞նչպէս կրնար Մարիամին մարմինը
յանցաւորի պէս փճանալ, ինք որ մարմին
տուած էր մեր յանցանքները Ձնջողին:

Ի՞նչպէս կրնար Յիսուս որ իր Մայրը
յանձնած ու վստահած էր իր սիրած աշա-
կերտին՝ Յովհաննէսի հոգատարութեան,
հոգ չտանիլ իր Մօրը մարմինին ու զանի-
կա իր քով՝ երկինք չփոխադրել: Յիսուս
ինքզինք հակասած պիտի չ'ըլլա՞ր եթէ
երբեք մէկ կողմէ Յովհաննէսի պատուի-
րէր հոգ տանիլ իր Մօրը այս մարմնաւոր
գետնի վրայ, իսկ միւս կողմէ, թոյլ տար
որ իր Մօրը մարմինը գետնի նողկալի
գեռուններուն կեր դառնար:

Օրհնեալ ըլլաս Տէ՛ր, որ կիներուն
մէջ ամենէն օրհնեալ Մօրդ մարմինը
քովդ առիր, եւ թոյլ չտուիր որ աշխարհի
բաժինը դառնար, ինք որ աշխարհի
Ստեղծիչդ ծնած էր:

Բոլոր Սերունդներուն Կողմէ Երանեալը

«Ասկէ ետք բոլոր սերունդները երանի պիտի տան ինձի» (Ղկ 1.48):

Մարիամ Սուրբ Հոգիէն ներշնչուած կը մարգարէանայ, թէ բոլոր ազգերն ու ժողովուրդները, բոլոր սերունդներն ու ցեղերը երանի պիտի տան իրեն: Այո՛, երանի պիտի տան իրեն բոլոր անոնք որոնք ճանչցան ու սիրեցին Քրիստոսը:

Բոլոր անոնք որոնք Քրիստոսի թելերուն տակ իրենց ապահովութիւնը գտան, երանի՛ պիտի տան Մարիամին՝ որ իր թելերուն տակ պահեց ու պահպանեց Յիսուս մանուկը:

Բոլոր անոնք որոնք ամուր բոնեցին Քրիստոսի ձեռքէն ու վայելեցին անոր ձեռքին պաշտպանութիւնը, երանի՛ պի-

տի տան Մարիամին՝ որ իր ձեռքերով
փայփայեց ու գգուեց Յիսուս մանուկը:

Բոլոր անոնք որոնք իրենց հանգիստը գտան Քրիստոսի գրկին մեջ, երանի՛ պիտի տան Մարիամին՝ որ բազմահազար անգամներ Յիսուս մանուկը գրկեց:

Բոլոր անոնք որոնք ընդունեցին Քրիստոսը իբրև կենսատու Հացը իրենց հոգիներուն, երանի՛ պիտի տան Մարիամին՝ որ բազմահազար անգամներ հաց կերակրեց կեանքի Հացին:

Բոլոր անոնք որոնք Քրիստոսապարզեւ կենսարար ջուրով յագեցուցին իրենց հոգիներուն ծարարը, երանի՛ պիտի տան Մարիամին՝ որ բազմահազար անգամներ ջուր խմցուց կենաց Գետին:

Բոլոր անոնք որոնք ճանչցան Քրիստոսը իբրև կենսապարզեւ պտուղ, երանի՛ պիտի տան Մարիամին՝ որ այդ պրտուղը հասունացնող ծա՛ռը դարձաւ:

Բոլոր անոնք որոնք Քրիստոսը դարձուցին բնակիչը իրենց սիրտերուն, երանի՛ պիտի տան Մարիամին՝ որ զՔրիստոս դարձուց բնակիչը իր որովայնին, իր սրտին, իր հոգիին եւ համակ էութեան:

Ուղղափառ հաւատքը լքած որոշ հոսանքներ, երանի չե՛ն տար Մարիամին, չե՛ն պատուեր Մարիամը, չե՛ն յարգեր Մարիամը, չե՛ն մեծարեր Մարիամը, չե՛ն բարձրացներ Մարիամը, չե՛ն գովեր ու չե՛ն գովաբաներ Մարիամը:

Այսպիսիները կ'ըսեն՝ *«ամէն պատիւ միայն Աստուծոյ կը վայելէ»*, բայց իրենք երբեք չեն քաշուիր զիրար պատուելէ եւ փառաւորելէ:

Կ'ըսեն՝ *«միայն զԱստուած պէտք է մեծարել»*, բայց իրենք երբեք չեն քաշուիր մեծաբանօրէն զիրար մեծարելէ:

Կ'ըսեն՝ *«բարձրացուիլը միայն Բարձրեային կը վայելէ»*, բայց իրենք երբեք

չեն քաշուիր զիրար բարձրացնելէ աւելի քան Բարձրեալը:

Կ'ըսեն՝ *«միայն զԱստուած պէտք է գովել ու գովաբանել»*, բայց իրենք երբեք չեն քաշուիր ամենափոքր պատճառին համար զիրար գովելէ ու գովաբանելէ:

Կ'ըսեն՝ *«միայն զԱստուած պէտք է փառաբանել»*, բայց իրենք իրարմէ փառք կը փնտռեն ու զիրար կը փառաբանեն:

Այդպիսիներ աւելի կը յարգեն իրենց մա'յրը, քան Աստուծոյ Որդիին Մայրը՝ Մարիամը. աւելի կը պատուեն իրենց աղջիկը, քան Հայր Աստուծոյ աղջիկը՝ Մարիամը. աւելի կը մեծարեն իրենց հարսը, քան Սուրբ Հոգիին հարսը՝ Մարիամը:

«Ասկէ ետք բոլոր սերունդները երանի պիտի տան ինձի»: Գործնական գետնի վրայ կը տեսնենք թէ ինչպէս երկու հոգիներ արդէն երանի տուին Մարիամին:

Առաջինը Եղիսաբեթն էր, որ ըսաւ Մարիամին. *«Երանի՛ք թեզի որ հաւատացիր, որովհետեւ Աստուծոյ կողմէ թեզի ըստածները պիտի կատարուին»* (Ղկ 1.45): Իսկ երկրորդ անձը կին մըն էր, որ Յիսուսի խօսած ատեն բացագանչեց. *«Երանի՛ այն կնոջ, որ թեզ յղացաւ եւ դիեցուց»* (Ղկ 11.27): Երկու անձեր երանի տուին Մարիամին, ուրեմն՝ Մարիամին երանի տալը Սուրբ Գրային հիմք ունի: Մենք երանի կու տա՞նք Մարիամին, կը պատուե՞նք զինք: Մարիամին երանի տալը՝ *«Երանի՛ իրեն որ ընտրուեցաւ Աստուծոյ Մայրը ըլլալու»* ըսելը չէ պարզապէս: Անոր երանի տալը՝ անոր համար երանութեան երգեր երգելն է, անոր համար հոգեւոր երգեր յօրինելն է, զինք մեր երգերով պատուելն է, մեծարելն է, գովաբանելն է:

Եթէ Հայրն Աստուած պատուեց Մարիամը՝ զինք ընտրելով ու դարձնելով իր

դուստրը եւ իր Որդիին Մայրը, մենք ո՞վ ենք որ զանհկա չպատուենք:

Եթէ Աստուծոյ Որդին մեծարեց Մարիամը՝ զինք դարձնելով իր Մայրը, մենք ո՞վ ենք որ զանհկա չմեծարենք:

Եթէ Սուրբ Հոգին փառաւորեց Մարիամը՝ զինք ընտրելով ու դարձնելով իր հարսը՝ մենք ո՞վ ենք որ զանհկա չփառաւորենք:

Եթէ Մարիամ հոգ տարաւ Յիսուս մանուկին, մենք ո՞վ ենք որ կը համարձակինք ըսել թէ Մարիամին գործը չէ մեզի հոգ տանիլը, կամ Մարիամ չի կրնար հոգ տանիլ մեզի:

Եթէ Մարիամ Նազարեթի ճամբաներէն քալեց «Ես եմ ճամբան» յայտարարող Փրկչին հետ եւ սորվեցուց անոր Նազարեթի ճամբաները, մենք ո՞վ ենք որ կը յանդգնինք ըսել թէ Մարիամ չի կրնար մեզի հետ քալել ու մեզի քալել սորվեցնել:

Եթէ Մարիամ ճամբորդակից ու ճանապարհորդակից եղաւ Յիսուս մանուկին, մենք ո՞վ ենք որ կը համարձակինք ըսել թէ Մարիամ չի կրնար ճամբորդակից ու ճանապարհորդակից ըլլալ մեզի դէպի երկինք մեր գնացքին մէջ:

«Ասկէ ետք բոլոր սերունդները երանի պիտի տան ինձի»: Այո՛, պէտք է երանի՛ տալ Մարիամին, որովհետեւ, եթէ երբեք Յիսուս կենաց գե՛տ է՝ այդ կենաց գետին աղբիւրը եղաւ Մարիամ ի՛նք:

Երանի՛ Մարիամին, որովհետեւ եթէ երբեք Աստուծոյ Որդին կրա՛կ է՝ այդ կրակը ընդգրկող անկիզելի մորենին եղաւ Մարիամ ի՛նք:

Երանի՛ Մարիամին, որովհետեւ եթէ Քրիստոս լո՛յս է՝ այդ լոյսը ծագեցնող արեգակը եղաւ Մարիամ ի՛նք:

Երանի՛ Մարիամին, որովհետեւ եթէ երբեք Յիսուս ցամքած հոգիները ոռոգող

անձրե՛ւ է՝ այդ անձրելը դրկող ամպը
եղաւ Մարիամ ի՛նք:

Երանի՛ Մարիամին, որովհետեւ եթէ
երբեք Քրիստոս զա՛նձ է՝ այդ գանձը
պարունակող գանձատունը եղաւ Մար-
իամ ի՛նք:

Երանի՛ Մարիամին, որովհետեւ եթէ
երբեք Էմմանուէլը տաճարի մէջ բնակող
Աստուա՛ծ է՝ անոր ամենէն մաքուր տա-
ճարը եղաւ Մարիամ ի՛նք:

Երանի՛ Մարիամին, որովհետեւ եթէ
երբեք Քրիստոս կենաց հա՛ց է՝ այդ հա-
ցը իր մէջ պատրաստող Ուխտի տապա-
նակը եղաւ Մարիամ ի՛նք:

Երանի՛ Մարիամին, որովհետեւ եթէ
երբեք Քրիստոս ամենուրեք Աստուա՛ծ
է՝ այդ ամենուրեք Աստուածը իր մէջ
բնակեցնող Սրբութիւն Սրբոցը եղաւ
Մարիամ ի՛նք:

Վերջապէս, յիշեցնենք, թէ Աստուած կը պատուիրէ որ պատուենք մեր ծնողները. եթէ երբեք մեր ծնողները պէտք է պատուենք, որքա՛ն աւելի պէտք է պատուենք Աստուծո՛յ ծնողը՝ Մարիամը:

«Մարիամ Սուրբ Հոգիին հարսն է», կ'ըսէ Ներսէս Շնորհալին: Ան որ կ'անարգէ Սուրբ Հոգիին Հարսը՝ Սուրբ Հոգին զինք չի՛ նորոգեր ու չի՛ լեցներ:

Ան որ չի պատուեր Աստուծոյ Որդիին Մայրը՝ թող չխորհի թէ Աստուծոյ Որդին կրնայ զինք իր արքայութեան մէջ առնել: Տեղ չունի՛ Քրիստոսի արքայութեան մէջ՝ Քրիստոսի Մայրը անտեսող մարդը: Տեղ չունի՛ Քրիստոսի արքայութեան մէջ՝ երկինքի արքայուհին՝ Մարիամը անարգող մարդը:

Ինչպէս մենք պիտի չուզէինք մեր տուներէն ներս ընդունիլ մէկը որ կ'անարգէ կամ կ'անտեսէ մեր մայրը, նոյն-

պէս ալ Յիսուս, երբեք պիտի չընդունի իր արքայութենէն ներս մէկը որ անարգանքով կը վերաբերի իր Սօրը հետ: Մէկը կրնայ մտածել թէ ինք չ'անարգեր Մարիամը. բայց կարելոր է գիտնալ, որ երբ անհրաժեշտ պատիւն ու մեծարանքը չենք ընծայեր անոր՝ ինքնաբերաբար անարգած կ'ըլլանք զայն:

Աւարտին դարձեալ կը հաստատեմ, որ Երանելի է Մարիամը, որովհետեւ առանց իրեն մէկը չի կրնար Քրիստոսի զալ կամ լաւապէս ճանչնալ Քրիստոսը: Երանելի է, որովհետեւ *«բոլոր ընտրեալները անոր միջոցաւ է որ պիտի հասնին յաւիտենական երանութեան»* (Իլտէֆոնս): Երանելի է, որովհետեւ Մայրն է փրկութեան, Փրկչին ու փրկուածներուն. Մայրն է սրբութեան, Սուրբին ու սրբուածներուն. Մայրն է արդարութեան, Արդարին ու արդարացածներուն:

Խաղողօրհները

Ի՞նչ առնչություն կայ վերափոխման տօնին եւ խաղողօրհներին միջեւ: Խաղողօրհները ունի առնչություն չունի Աստուածածնայ վերափոխման տօնին հետ: Արդ, եթէ անոնք առնչություն չունին իրարու հետ, մենք ինչո՞ւ զանոնք կը կատարենք միասնաբար: Այս հարցումին պատասխանը յստակ կը դառնայ եթէ երբեք նկատի առնենք հետեւեալ 2 կէտերը.-

ա) Համաձայն Աստուածաշունչին եւ մեր հայրերու ասանդութեան, արտի երախայրիքը (առաջին բերքը), պէտք էր ընծայուէր Աստուծոյ: Այս ընծայումը անցեալին տեղի կ'ունենար Օգոստոսին, որովհետեւ այս ամսուն էր որ սովորաբար պտուղներուն մեծ բաժինը կը հատուննար, ինչպէս է պարագան այսօր:

բ) Հայ Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, մենք Օգոստոս 15-ի մերձաւոր Կիրակիին կը տօնենք Աստուածածնայ վերափոխումը: Արդ, քանի արտերու առաջին բերքի նուիրումը Օգոստոսին էր որ տեղի կ'ունենար, եւ քանի Աստուածածնայ վերափոխումը եւս Օգոստոսին էր որ կը կատարուէր, ժամանակի ընթացքին եկեղեցին յարմար տեսաւ որ այս երկու դէպքերը միասնաբար կատարուին, մէկս միւսը աւելի ուշագրաւ եւ իմաստալից դարձնելու նպատակով:

Եկեղեցին ճիշդ ըրաւ զանոնք միասնաբար կատարելու որոշումը առնելով, այլապէս, այսօր մեր ժողովուրդը իր ունեցածէն որոշ բան մը Աստուծոյ նըւիրելու սովորութիւնը ամբողջութեամբ մոռցած պիտի ըլլար:

Աստուածածնի վերափոխման տօնը առիթ մըն է մեր ժողովուրդի զաւակներ-

րուն համար, մտածելու՝ տալու առաքի-
նութեան մասին, մեր անձին նեղ պարու-
նակէն դուրս գալու եւ դէպի եկեղեցին ու
դէպի աղքատը բացուելու մասին:

Խաղողի կամ ոչխարի ընծայումը,
անցեալէն մեզի եկած մեր հայրերուն ու
մայրերուն հաւատքի արտացոլացումն է,
մնացորդն է. այն հաւատքին՝ որ իր ա-
ռաջինը Աստուծոյ նուիրե՛լ գիտէր:

Իսկ թէ ինչո՞ւ համար պտուղներուն
մէջէն ընտրուեցաւ խաղողը: Հաւանա-
բար, անոր համար որ Քրիստոս ինքզինք
նմանցուց որթատունկի (Յհ 15.1), եւ գի-
նին՝ որ կը պատրաստուի խաղողի հիւ-
թէն, կոչեց իր արիւնը (Ղկ 22.17): Եթէ
երբեք նկատի առնենք նաեւ, որ սուրբ
Պատարագի գինին եւս կը պատրաստուի
խաղողի հիւթէն, պարզ կը դառնայ թէ
ինչու եկեղեցին նախապատուութիւնը
խաղողին տուաւ: